

«ԱԼՖԱՍԵԲՅՈՒՐԻԹԻՉ»

Սահմանափակ Պատասխանատվության Ընկերության

2020թ. տարեկան ֆինանսական վերլուծություն

2020 թ. Ընկերության ռազմավարությունը նպատակաուղղված է եղել այնպիսի միջնաժամկետ նպատակների իրականացմանը, ինչպիսիք են Ընկերության ֆինանսական ցուցանիշների կայունության ապահովումը, ներդրումային շուկայում գործունեություն իրականացնող ընկերությունների շարքում մրցունակ լինելը, Ընկերության ընդհանուր կապիտալի նվազագույն չափի և Ն1 տնտեսական նորմատիվի ապահովումը, հաճախորդների կայուն սեզմենտի ապահովումը:

2020 թվականի ընթացքում ՀՀ մակրոտնտեսական միջավայրը ձևավորվել է ՀՀ-ում և ամբողջ աշխարհում կորոնավիրուսի համավարակի ալիքի տարածման և սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից Արցախի հանրապետության դեմ սանձազերծված լայնամասշտաբ հարձակմամբ պայմանավորված՝ ՀՀ-ում հայտարարված արտակարգ դրության ազդեցությամբ: Կենտրոնական բանկի կողմից սահմանված վերաֆինանսավորման տոկոսադրույքը տարեվերջին աճել է 1.0 տոկոսային կետով՝ կազմելով 5.25%, հետևաբար ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրվող լոմբարդային ռեպոյի և բանկերից ներգրավվող միջոցների տոկոսադրույքները նույնպես առաջին կիսամյակի համեմատ աճել են՝ կազմելով տարեվերջին համապատասխանաբար 6.75% և 3.75%:

Բորսայական և արտաբորսայական առևտրի շրջանակներում կատարված գործարքների եկամտաբերության տոկոսադրույքները 2020թ.-ի տարեսկզբից նվազել են, ինչի արդյունքում նվազել են նաև ՀՀ ԿԲ կողմից տրամադրվող պետական պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերության կորերը: Կորի նվազումն ազդեցություն է ունեցել կնքվող ռեպո գործարքների ապահովման միջոց հանդիսացող պետական պարտատոմսերի գնահատման վրա, իսկ ինչ վերաբերում է ռեպո գործարքների տոկոսադրույքին, ապա այն տարվա ընթացքում նվազել է 6.50%-ից, առաջին կիսամյակի վերջում կազմելով 4.89%, ինչի արդյունքում նվազել են Ընկերության տոկոսային ծախսերը և աճել է զուտ տոկոսային եկամուտը: ԿԲ դրամավարկային խթանող քաղաքականությունը բերեց գնանի աստիճանական կայունացման, ինչը հանգեցրեց եկամտաբերության կորի աճին, որի արդյունքում ռեպո գործարքների տոկոսադրույքները տարեվերջին կազմեցին 6.25%:

2020 թվականին Ընկերությունը շարունակել է ակտիվ համագործակցել ֆիզիկական և իրավաբանական անձ ներդրողների հետ հիմնական և ոչ հիմնական ծառայությունների շրջանակներում:

Արժեթղթերի շուկայում գործունեության տասնութ տարվա շարունակական փորձը, գործնական կապերը, աշխատակիցների հմտությունը և իրազեկությունը թույլ են տվել ֆինանսական շուկայում ստեղծված իրավիճակում ժամանակին իրականացված գործողությունների արդյունքում ապահովել Ընկերության ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվը:

Ամփոփելով Ընկերության հաշվետու տարվա գործունեության արդյունքները՝ կարող ենք արձանագրել, որ Ընկերությունը կատարել է նախորդ տարվա գործարար ծրագրով նախատեսված ցուցանիշները՝ հիմնականում 10% շեղումների միջակայքում:

Ընկերության կառավարման մարմինը դրական է գնահատում աշխատակիցների կողմից կատարված աշխատանքները և նախատեսում է 2021 թվականի ընթացքում շարունակել ակտիվ աշխատել արժեթղթերի շուկայում՝

ներգրավելով պահի դրությամբ բանկային համակարգում գոյություն ունեցող ազատ ռեսուրսները և տեղաբաշխելով դրանք հիմնականում պետական պարտատոմսերում: Նախատեսված խնդիրների կատարողականը գնահատվում է հետևյալ կերպ.

ա) ներդրումային ընկերության կապիտալիզացումը.

Ընկերությունն իր առջև նպատակ էր դրել ավելացնել ընդհանուր կապիտալը՝ 2020թ.-ի վերջին հասցնելով 1.3 մլն դրամի: Ընկերության ընդհանուր կապիտալը նախորդ տարվա 982.4 մլն դրամի համեմատ տարեվերջի դրությամբ կազմել է 951.1 մլն դրամ: Սակայն անհրաժեշտ է նշել, որ նշված ցուցանիշը պայմանավորված է աշխարհում տիրող համավարակի և սեպտեմբերին Արցախում բռնկված պատերազմի արդյունքում շուկայում տիրող անկայուն վիճակով, Կենտրոնական բանկի կողմից վերաֆինանսավորման տոկոսադրույքի բարձրացմամբ, ՊՊ եկամտաբերության կորի բարձրացմամբ, ինչի արդյունքում Ընկերության ակտիվների վերագնահատման պահուստները նվազել են մոտ 244 մլն. դրամով, հակառակ դեպքում Ընկերությունը կապահովեր նախատեսված ցուցանիշն ամբողջությամբ: Հարկ է նշել, որ 2020թ. նոյեմբերին Ընկերությունն արդեն իսկ ապահովել էր 1.3 մլդ. դրամի չափով կապիտալ, սակայն եկամտաբերության կորերի և ռեպո տոկոսադրույքների բարձրացման հետևանքով՝ ակտիվների վերագնահատման պահուստները հասել են բացասական ցուցանիշի, Ընկերության կապիտալը կրկին նվազել է՝ հասնելով 951 մլն. դրամի: Բացի այդ Ընկերությունը 127 մլն դրամի չափով շահաբաժին է վճարել տարվա ընթացքում, ինչը նույնպես ներագդել է կապիտալի նվազեցմանը:

Կանոնադրական կապիտալը և գլխավոր պահուստը մնացել են անփոփոխ՝ կազմելով համապատասխանաբար 250.0 մլն դրամ և 37.5 մլն դրամ:


2020թ.-ի համար Ընկերության հիմնական խնդիրներից էր նաև ավելացնել ընդհանուր ակտիվների ծավալը հասցնելով 11.6 մլդ դրամի: Նախորդ տարվա համեմատ 2020թ.-ի ընթացքում Ընկերությունն ավելացրել է ընդհանուր ակտիվների ծավալը 278.2 մլն դրամով: Ընկերության ակտիվները հուլիս-օգոստոս ամիսներին արդեն իսկ կազմել են 11.4 և 11.2 մլդ դրամ, սակայն դրանք սկսեցին աստիճանաբար նվազել, ինչը հետևանք էր սեպտեմբերին Արցախում բռնկված պատերազմի, ինչպես նաև տվյալ իրավիճակում ռիսկայնությունից խուսափելու նպատակով հաճախորդների կողմից իրենց պետական պարտատոմսերի վաճառքի և պարտավորությունների մարման: 2020թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ընդհանուր ակտիվները կազմել են 10.3 մլդ դրամ:


Ինչ վերաբերում է Ընկերության ընդհանուր պարտավորություններին, ապա 2020թ. հուլիս-օգոստոս ամիսներին Ընկերությունն արդեն իսկ ունեցել է համապատասխանաբար՝ 10.4 մլդ և 10.2 մլդ դրամ պարտավորություններ, սակայն վերոնշյալ հանգամանքներից ելնելով՝ դրանք սեպտեմբեր ամսից սկսեցին աստիճանաբար իջնել, և 2020թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ընդհանուր պարտավորությունները կազմել են 9.3 մլդ դրամ՝ նախատեսված 10 մլդ դրամի փոխարեն:

2020 թվականի գործունեության ընթացքում ընդհանուր կապիտալի, ընդհանուր պարտավորությունների և ընդհանուր ակտիվների տարրերի կառուցվածքային փոփոխություններ չեն կատարվել: Ընդհանուր կապիտալի և ընդհանուր պարտավորությունների հարաբերակցության մակարդակը 2020 թվականի ընթացքում կազմել է 10.17%, իսկ ընդհանուր կապիտալի և ընդհանուր ակտիվների հարաբերակցության մակարդակը՝ 9.23%:

Ընկերության արդյունավետ գործունեությանը նպաստել են ՀՀ պետական պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերության տոկոսադրույքների իջեցումը: Բորսայական և արտաբորսայական առևտրի շրջանակներում կատարված գործարքների եկամտաբերության տոկոսադրույքները 2020թ.-ի ընթացքում նույնպես նվազել են, այնուհետև տարեվերջին միտում են ունեցել բարձրանալու:


Ստորև ներկայացնենք 2019թ.-ից 2020թ. շուկայում տեղաբաշխված պարտատոմսերի միջին կշռված եկամտաբերության տոկոսադրույքի նվազումը:






բ) ներդրումային հիմնական և ոչ հիմնական ծառայությունները.

«Վ» ֆինանսական ցուցանիշները 2020թ.-ի ընթացքում շարունակել են դրական ազդեցություն թողնել Ընկերության գործունեության արդյունքների վրա: Ներկայացնենք, թե տարեվերջին ինչ պարտատոմսեր են եղել շրջանառության մեջ և դրանցից որոնք են համարել Ընկերության պետական պարտատոմսերի պորտֆելի կառուցվածքը:




31.12.20թ. դրությամբ ՊՊ ծավալը շրջանառության մեջ և
Ընկերության պորտֆելում



Թողարկման համար	Շրջանառության ծավալ	Ընկերության պորտֆելի պետական պարտատոմսեր	Փաթեթի կառավարման շրջանակներում պետական պարտատոմսեր	Ընկերության պորտֆելի պետական պարտատոմսերի մասնաբաժինը շրջանառության ծավալում
AMGB30163472	125,700,405,000	1,597,000,000	1,700,000,000	2.62%
AMGB2029A366	80,000,000,000	1,555,041,000	437,170,000	2.49%
AMBG1029A292	166,761,459,000	1,149,000,000	301,000,000	0.87%
AMGB1029A250	42,574,200,000	940,283,000		2.21%
AMGB1029A235	17,625,000,000	811,267,000		4.60%
AMGB20172327	69,500,000,000	700,000,000		1.01%
AMGB10172212	31,757,000,000	991,000,000		3.12%
AMGB1029A276	50,420,000,000	590,000,000		1.17%
AMGN60294227	74,209,262,000	220,000,000		0.24%
AMGB3129A504	49,699,400,000	180,000,000		0.44%
Ընդամենը	708,246,726,000	8,733,591,000	2,438,170,000	1.58%

Կարելի է նկատել, որ 2020թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության պորտֆելում գերակշռում են երկարաժամկետ պարտատոմսերը՝ հետևյալ հարաբերակցությամբ:

Պարտատոմսերի կառուցվածքը ըստ միջև մարում ժամկետայնության



Այս հարաբերակցությունը պայմանավորված է Ընկերության երկարաժամկետ նպատակներով: Ընկերության 18 տարվա աշխատանքային գործունեության ընթացքում ապահովված ընդհանուր կապիտալի անը, ինչպես նաև տարիների փորձն ու գիտելիքները, ընթացքում անընդմեջ կատարվող շուկայի վերլուծությունները թույլ են տալիս մանրել ֆինանսական շուկայում և Ընկերության արժեթղթերի պորտֆելը երկարաժամկետ պարտատոմսերով համալրելը դառնում է իրատեսական, ոչ միայն ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների տեսքով պահելու, այլև այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների տեսքով, առաջիկա տարիներին վաճառելու և լրացուցիչ եկամուտ ստանալու համար: Ընկերության պորտֆելը արդիականացնելու և երկարաժամկետ պարտատոմսերով համալրելու գործընթացը կարգավորելու նպատակով 2020թ.-ի սկզբին Ընկերությունն իր առջև նպատակ դրեց վաճառել 2020-2021թ.-ին մարվող պարտատոմսերը: Արդյունքում՝ Ընկերությունը 2020թ.-ի ընթացքում արժեթղթերի վաճառքից ստացված գուտ եկամուտը կազմել է 201.4 մլն դրամ:

Անհրաժեշտ է նշել, որ 2020 թվականի ընթացքում Ընկերությունը վերսկսեց իր գործունեությունը Ռուսական շուկայում, որտեղ կատարված գործարքների արդյունքում Ընկերությունը ստացել է 1.7 մլն. դրամի եկամուտ:

Փոխարենը՝ 2020թ.-ի ընթացքում պորտֆելի արդիականացման նպատակով Ընկերությունն ավելացրել է 10-30 տարեկան երկարաժամկետ պետական պարտատոմսերի ծավալը: 2020թ.-ի տարեվերջի դրությամբ երկարաժամկետ պարտատոմսերի ծավալը նախորդ տարվա համեմատ ավելացել է մոտ 2 մլրդ-ով: Այդ ներդրումային որոշումը պայմանավորված էր նրանով, որ երկարաժամկետ պետական պարտատոմսերի (10-30 տարեկան) եկամտաբերության կորի և ռեպո տոկոսադրույքների մարժան եղել է 4-5%, իսկ միջին ժամկետային (3-5 տարեկան) պետական պարտատոմսերի եկամտաբերության կորի և ռեպո տոկոսադրույքների մարժան եղել է 1.5-2%:


Ընկերությունը մտադիր է շարունակել պորտֆելի արդիականացման գործընթացը և 2021թ. մասնակցել երկարաժամկետ և միջնաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի հերթական տեղաբաշխումներին:

Ընկերության պորտֆելի դիվերսիֆիկացիա ապահովելու, ինչպես նաև ֆինանսական կազմակերպություններին աջակցելու նպատակով 2020թ.-ի ընթացքում Ընկերությունը շարունակել է ներդրումներ իրականացնել նաև առաջատար ընկերությունների կողմից թողարկված կորպորատիվ արժեթղթերում: 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության կորպորատիվ արժեթղթերի պորտֆելը ունեցել է հետևյալ կառուցվածքը.

(Հազար դրամ)

	Դրամային պարտատոմսեր	Դոլարային պարտատոմսեր	Ընդամենը
«Գլոբալ Կրեդիտ»	10,092	44,680	54,772
«Ինեկորբանկ» ՓԲԸ		15,414	15,414
«Կոնվերսբանկ» ՓԲԸ		34,350	34,350
«Արարատբանկ» ՓԲԸ		26,619	26,619
Ընդամենը	10,092	121,063	131,155


Իր գործունեությունն ապահովելու նպատակով Ընկերությունը միջոցները ներգրավել է ՀՀ գործընկեր բանկերից մի քանիսի հետ ռեպո համաձայնագրերի միջոցով: 2020թ.-ի 2-րդ կիսամյակում Ընկերությունը վերսկսել է համագործակցությունը «Ակբա-Կրեդիտ Ազրիկոլ ԲԱՆԿ» ԲԲԸ-ի, «ՀԱՅԲԻՉՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի հետ: Ստորև ներկայացված է, թե դեկտեմբերի ընթացքում ինչ ծավալի ռեպո գործարքներ են իրականացվել բանկերից յուրաքանչյուրի հետ:




Հարկ է նշել ,որ 2020թ. երկրորդ կիսամյակի ընթացքում բանկերի կողմից տրամադրվող ռեպո համաձայնագրերի ապահովման միջոց հանդիսացող պետական պարտատոմսերի գնահատման պայմանները վատացել են, ինչը պայմանավորված է եղել սեպտեմբերին բռնկված պատերազմի արդյունքում՝ վերաֆինանսավորման տոկոսադրույքի բարձրացմամբ և եկամտաբերության կորերի աճով: Մասնավորապես, բանկերի կողմից, պետական պարտատոմսերի եկամտաբերության կոր+3%, haircut*10% գնահատման արդյունքում Ընկերության ազատ պետական պարտատոմսերի ծավալները կրճատվել են:

Դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունն ունեցել է 9.3 մլդ դրամի ռեպո գործարքներ՝ միջինը 6.25% տարեկան եկամտաբերությամբ, ինչը 0.3 տոկոսային կետով ցածր է շուկայում առկա միջին կշռված տոկոսադրույքից: Ընկերության արդյունավետ աշխատանքի շնորհիվ ողջ տարվա ընթացքում Ընկերության կողմից կնքված ռեպո գործարքների միջին տոկոսադրույքը շարունակել է ցածր լինել շուկայական միջին կշռված տոկոսադրույքից, ինչը նպաստել է Ընկերության տոկոսային ծախսերի կրճատմանը: Ռեպո համաձայնագրերի դիմաց վճարված տոկոսները 2020թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել են 473.6 մլն դրամ, ինչը 25.7 մլն-ով պակաս է նախորդ տարվա նույն ցուցանիշից:


ՌԵՊՈՏՈՎԱԿԱՆ ՄԻՋԻՆ ԿՆՈՒՄՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆԸ




Ընկերության ներդրողների զգալի մասը հաշվի առնելով 2020թ ընթացքում շուկայում տիրող անկայուն վիճակը հետ են կանչել իրենց ներդրումները: 2020թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ արժեթղթերի փաթեթի կառավարիչը ունեցել է հետևյալ ծավալի ռեպո գործարքներ.



Շուկայում տիրող ռիսկային մթնոլորտով, ՊՊ եկամտաբերության կորերի բարձրացմամբ, ինչպես նաև ԿԲ կողմից վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերանայմամբ պայմանավորված՝ Ընկերության ներդրողները հարկ համարեցին հետ կանչել իրենց ներդրումները դիվերսիֆիկացիայի գործառնությունների շրջանակներում, ինչի արդյունքում դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չի ունեցել հակադարձ ռեպո պայմանագրեր: Վերոնշյալից ելնելով՝ 2020թ.-ի տարեվերջի դրությամբ հակադարձ ռեպո համաձայնագրերից ստացված տոկոսագումարներից Ընկերության ստացած եկամուտը կազմել է 68.9 մլն դրամ:




Բացի ռեպո համաձայնագրերի շրջանակներում որպես ապահովման միջոց օգտագործված արժեթղթերից Ընկերությունն իր հաշիվներին ունի նաև ազատ արժեթղթեր, որոնք սեփականության իրավունքով պատկանում են Ընկերությանը, իսկ անվանատիրոջ հաշիվներին հաշվառվող արժեթղթերը, պահառության շրջանակներում Ընկերության մոտ պահվող արժեթղթերն են, որոնք սեփականության իրավունքով պատկանում են ներդրողներին:



գ) Ընկերության շահութաբերությունը, եկամուտները և ծախսերը.

Ընկերության եկամուտների կառուցվածքի մեջ զգալի մաս են կազմում ՀՀ պետական արժեթղթերից ստացված տոկոսային եկամուտները, որոնք 2020թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել են 880 մլն դրամ՝ 78 մլն-ով գերազանցելով նախորդ տարվա նույն ցուցանիշը: Հարկ է նշել, որ Ընկերության ՊՊ պորտֆելի 65%-ը դասակարգվել է որպես ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ, իսկ 35%-ը՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ակտիվներ: Ամորտիզացված արժեքով չափվող ակտիվների շուկայական արժեքը 31.12.20-ի դրությամբ կազմում է 6.9 մլրդ դրամ, ինչը 257 մլն դրամով գերազանցում է դրանց հաշվեկշռային արժեքը, ինչը հետևանք է նախորդ տարիներին ձեռք բերված բարձր եկամտաբերությամբ պարտատոմսերի: Ընկերության ՀՀ պետական պարտատոմսերի պորտֆելի այս կառուցվածքը թույլ է տալիս ունենալ կայուն եկամուտ և գերծ մնալ շուկայական տոկոսադրույքների տատանումներից առաջացած վնասից:



Այսպիսով՝ 2020թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ընդհանուր տոկոսային եկամուտը կազմել է 956 մլն դրամ՝ ապահովելով գործարար ծրագրով նախատեսվածի (1,000,000 մլն դրամ) 96%-ը: Նշենք, որ Ընկերության հակադարձ ռեպոների ծավալների կրճատման պատճառով, նվազել են դրանց մասով նախատեսվող տոկոսային եկամուտները:

Ինչ վերաբերում է տոկոսային ծախսերին, ապա Ընկերությունը նախատեսել էր ունենալ 580 մլն դրամի ծախս, իսկ փաստացի տոկոսային ծախսը 2020թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 482.3 մլն դրամ: Տոկոսային ծախսերի նվազմանը նպաստել է տարեսկզբին ֆինանսական շուկայի բարենպաստ միջավայրը, ինչպես նաև ԿԲ խորհրդի կողմից վերաֆինանսավորման տոկոսադրույքի իջեցումը, ինչը նպաստեց ռեպո գործարքների տոկոսադրույքների իջեցմանը:

Արդյունքում 2020թ.-ի տարեվերջին գուտ տոկոսային եկամուտը կազմել է

473.8 մլն դրամ՝ գերազանցելով գործարար ծրագրով նախատեսվածի 420 մլն դրամը: Չուտ տոկոսային եկամուտը նախորդ տարվա համեմատ ավելացել է 52 մլն դրամով, ինչը պայմանավորված է եղել նրանով, որ տոկոսային ծախսերը նախորդ տարվա համեմատ նվազել են 4%-ով, իսկ տոկոսային եկամուտները՝ աճել են 11%-ով:

(հազար դրամ)

	31.12.19		31.12.20	2020թ. կանխ.
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	922,972		956,233	1,000,000
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	501,582		482,396	580,000
Չուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ	421,390		473,837	420,000
Ստացված գուտ կոմիսիոն և այլ վճարներ	31,499		-725	39,100
Չուտ եկամուտ առևտրային գործառնություններից	220,545		214,625	150,000
Գործառնական եկամուտներ	672,859		691,078	609,100
Շահույթ/վնասը մինչև հարկումը	450,807		416,682	344,100
Ժամանակահատվածի շահույթ/վնաս	361,088		339,276	275,280

Հետևյալ համեմատությունից կարելի է նկատել, որ չնախատեսված աճ են ունեցել գործառնական եկամուտները, որոնք բաղկացած են գուտ տոկոսային եկամուտներից, ստացված կոմիսիոն ու այլ վճարներից և գուտ առևտրային գործունեությունից ստացված եկամուտից: Իսկ գուտ առևտրային գործառնություններից ձևավորված եկամուտը տարեվերջին կազմել է 215 մլն դրամ:

Այսպիսով, 2020թ.-ի ֆինանսական շուկայում ստեղծված իրավիճակում Ընկերությունն արդյունավետ կերպով կատարել է իր առջև դրած նպատակները և ժամանակաշրջանի շահույթը կազմել է 339.2 մլն դրամ: Հաշվի առնելով, որ Ընկերությունը գործարար ծրագրով նախատեսել էր ունենալ 275.2 մլն շահույթ, կարելի է ասել, որ Ընկերությունը գերակատարել է իր կանխատեսումները 23%-ով:

դ) հաճախորդների քանակը, վերջիններիս փոփոխության դինամիկան.

2020 թվականի տարեսկզբին Ընկերությունը շարունակել է համագործակցել ֆիզիկական և իրավաբանական անձ ներդրողների հետ, որոնց հետ կնքվել են ՀՀ պետական պարտատոմսերի առք ու վաճառքի պայմանագրեր և հակադարձ ռեպո գործարքներ:

Աշխարհում տիրող համավարակով, ինչպես նաև սեպտեմբերին Արցախում բռնկված պատերազմով պայմանավորված՝ շուկայում տիրող անորոշ և ռիսկային իրավիճակը ներագդեց հաճախորդների հետ համագործակցության կրճատման վրա: Ինչպես արդեն նշվել է 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ռեզիդենտ ներդրողները շուկայի անկայուն վիճակից ելնելով մարել են իրենց պարտավորությունները և Ընկերությունը չի ունեցել ռեպո գործարքներ փաթեթի կառավարման շրջանակներում, ինչպես նաև չի ունեցել հակադարձ ռեպո պայմանագրեր:

Վերոնշյալ հանգամանքներից ելնելով՝ 2020 թվականի չորրորդ եռամսյակի վերջում Ընկերությունը չունի հաճախորդների նկատմամբ պահանջներ:

ե) կադրային քաղաքականություն.

Ընկերությունն իր կադրային քաղաքականությունը կառուցում է երկարաժամկետ համագործակցության, աշխատակիցների նկատմամբ խրախուսման սկզբունքների հիման վրա: 2020 թվականի ընթացքում Ընկերությունն ավելացրել է աշխատակիցների քանակը՝ ընթացիկ գործունեությունն ավելի արդյունավետ, արագ և որակյալ կազմակերպելու համար:

Ընկերությունը մշտապես ուշադրություն է դարձնում սեփական կադրերի պատրաստման և վերապատրաստման աշխատանքներին, որը թույլ է տալիս աշխատակիցներին յուրացնել փոփոխվող օրենսդրական դաշտը, ուսումնասիրել գործընկերների հետ համագործակցության ուղիները, ներդրվող և մշակվող տեխնոլոգիաները և այլն: Ընկերությունը խրախուսում է նաև աշխատակիցների մասնագիտական որակավորումը և ձգտում է նրան, որ բոլոր աշխատակիցներն ունենան համապատասխան որակավորում: 2020թ. մի քանի աշխատակիցներ ստացել են նաև լրացուցիչ մասնագիտական որակավորումներ՝ աշխատանքների փոխարինելիությունն ու անընդհատությունն ապահովելու նպատակով:

Նշենք, որ Ընկերության գործունեության հետ առնչվող բոլոր աշխատակիցներն ունեն բարձրագույն կրթություն, աշխատակիցների մեծամասնությունն ունի համապատասխան բարձր որակավորում և արժեթղթերի ոլորտում աշխատելու բազմամյա փորձ:

Ընկերության աշխատակիցները 2020 թվականի ընթացքում բարեհաջող հանձնել են քննություններ և ստացել որակավորման վկայականներ, ինչն էլ վկայում է, որ Ընկերությունը շահագրգռված է լավագույն կադրեր պատրաստելու հարցում:

գ) նորամուծություններ.

Ընկերությունը 2020թ ընթացքում միջոցառումներ է ձեռնարկել ուսումնասիրելու Ռուսական արժեթղթերի շուկաները, որը կարող է հետագայում արժեթղթերի շուկայում և ավելի գրավիչ դարձնել Ընկերության կողմից առաջարկվող ծառայությունների շրջանակը: Ընկերությունը Ռուսաստանի արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցներից ստացել է գործնական առաջարկ՝ բացելու հաշվիներ և համագործակցել: 2020 թվականին Ընկերությունը, Quick առևտրային հարթակի միջոցով, անձամբ մասնակցել է Մոսկվայի ֆոնդային բորսայի բորսայական առևտրին:

Ընկերությունը 2020թ ընթացքում լիարժեք օգտագործել է Հաշվապահական հաշվառման Հայկական ծրագրերը, հատուկ բանաձևերի կիրառման արդյունքում հեշտությամբ արտահանել է ՀՀ կենտրոնական բանկ հաշվետվությունների համար անհրաժեշտ տեղեկությունները: Պետական արժեթղթերով իրականացվող գործարքների արագ և որակով կատարման համար Ընկերությունը գործարքներն իրականացնում է CBANET համակարգի միջոցով:

է) մարկետինգային քաղաքականություն.

Ընկերության մարկետինգային քաղաքականությունը 2020 թվականին ուղղված է եղել պետական պարտատոմսերում ներդրումների ոլորտում կայուն դիրքերի գրավմանը, գործընկերների հետ փոխշահավետ համագործակցության ապահովմանը, ինչը նպաստել է հաճախորդների կայուն սեզմենտի ներգրավմանը:

Արժեթղթերի շուկայում գործունեության տասնութ տարվա շարունակական փորձը, գործնական կապերը, աշխատակիցների հմտությունը և իրազեկությունը թույլ են տվել ֆինանսական շուկայում ստեղծված իրավիճակում ժամանակին իրականացված գործողությունների արդյունքում ապահովել Ընկերության ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվը:

Գործադիր տնօրեն

Գլխավոր հաշվապահ



Գ.Գրիգորյան

Կ.Սիմոնյան